ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

ՈՐԽ0102 –25/01L-Հ
Դաս: ՀՊ
«13 » հուլիսի 2018թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը, ինչպես նաև Բանկի իրացվելիության ապահովման նպատակով Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Թողարկել արժեկտրոնային պարտատոմսեր Ծրագրային ազդագրի (ՀՀ ԿԲ նախագահի 23.05.2018թ. N 1/356Ա որոշմամբ գրանցված) հիման վրա՝ 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 100,000 (հարյուր հազար) հատ, 36 (երեսունվեց) ամիս մարման ժամկետով, տարեկան 9.5 (ինն ամբողջ հինգ տասնորդական) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:
2. Տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի եղանակով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել 2018 թվականի հուլիսի 23-ին ժամը 09:00–ին և ավարտել 2018 թվականի օգոստոսի 31-ին ժամը 15:00-ին: Տեղաբաշխումն իրականացնել Ծրագրային ազդագրով սահմանված կարգով հաշվարկված ըստ օրերի վաճառքի գներով:
3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաբաշխման գործընթացը:
4. Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի

գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:

5. Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել թողարկման օրվանից հաշվարկված 36 (երեսունվեց) ամիս անց: Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
6. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 49/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Բարսեղ Բեգլարյան**